«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի
11.06.2025թ. թիվ 532 Ն/Մ հրամանի

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում
Արձանագրություն թիվ 13, 26.05.2022թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 7 28.12.2023թ.
Առ՝ 04.01.2024թ. փոփոխություններով
Արձանագրություն թիվ 9 05.06.2025թ.
Առ՝ 11.06.2025թ. փոփոխություններով

ՎԱՆԱՁՈՐ
2025թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը մշակվել է Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ՎՊՀ) ուսանողների, վարչական և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի (այսուհետ՝ շահառու) ակադեմիական շարժունության ընթացակարգը կանոնակարգելու նպատակով:

Շարժունության կանոնակարգի իրավական և տեսական հիմքը կազմում են ՀՀ «Կրթության մասին» օրենքը, ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, Բոլոնիայի հռչակագրի դրույթները, ՀՀ կառավարության 2011թ. N1240-Ն որոշման «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը», Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության 2015 ուղեցույցը (ECTS guide), Էրազմուս+ շարժունության հիմնական գործողությունների քայլ առ քայլ ուղեցույցը[1] և Բարձրագույն կրթության Էրազմուսի կանոնադրությունը (խարտիան)[2]:

1.2. Շարժունությունը ուսանելու (ուսումնառություն, պրակտիկա, ավարտական աշխատանք), հետազոտություններ կատարելու, դասավանդելու, վերապատրաստվելու կամ որակավորումը բարձրացնելու նպատակով մեկ այլ ուսումնական հաստատությունում շահառուի գործունեության ժամանակավոր շարունակումն է:

1.3. Շահառուների շարժունության հիմքերն են.

1.3.1. ներպետական և/կամ միջազգային միջբուհական համագործակցության պայմանագրերը,

1.3.2. Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերը,

1.3.3. ԵՄ-ի և/կամ ԵՄ տնտեսական տարածքի երկրներում անցկացվող պրակտիկաները[3]:

1.3.4. Շահառուների սեփական նախաձեռնությամբ իրականացված վերապատրաստումները[4]:

[1] https://aec-music.eu/userfiles/File/FULL%20SCORE/ERasmus%20+%20AEC%20forms/Edited-Step%20by%20step-Erasmus%20+%20Guidelines%20for%20Mobility%20Actions%20(1).pdf

[2] https://erasmus-plus.ec.europa.eu/sites/default/files/2021-09/Erasmus-ECHE-certificat_vert-EN.pdf

[3] Տե՛ս Էրազմուս+ շարժունության գործողությունների ուղեցույցի էջ 4:

1.4. Շարժունությանը վերաբերող գործունեությունն իրականացվում է գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի կողմից՝ ֆակուլտետների, ամբիոնների, կրթական գործընթացների կառավարման բաժնի և այլ մասնակից կողմերի աջակցությամբ:

2. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆԸ ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1. Ներպետական և/կամ միջազգային միջբուհական համագործակցության պայմանագրերի դեպքում գործընկեր կողմերը սահմանում են մրցույթի ժամկետների ընտրությունը և հյուրընկալվող շահառուների թիվը:

2.2. Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության իրականացման դեպքում, համաձայն պայմանագրում ամրագրված ժամկետների՝ հյուրընկալող բուհը հայտարարում է մրցույթ՝ նշելով ԵՄ-ից ֆինանսավորվող շարժունության դրամաշնորհների թիվը և շարժունության ձևը (ուսանողներ, վարչական/դասավանդող աշխատակիցներ):

2.3. Շարժունության վերաբերյալ հայտարարվում է մրցույթ և մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրում ՎՊՀ պաշտոնական կայքում (www.vsu.am) և սոցիալական ցանցերում:

3. ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆԸ ԴԻՄՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1. Շարժունության հայտ կարող են ներկայացնել առկա և հեռակա ուսուցման համակարգերի հետևյալ ուսանողները.

- Բակալավրիատ. 2-րդ կուրս՝ 1-ին և 2-րդ կիսամյակում և 3-րդ կուրս՝1 կիսամյակում(առկա)
- Բակալավրիատ. 2-րդ, 3-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակում և 4-րդ կուրսի 1-ին կիսամյակում (հեռակա)
- Մագիստրատուրա. 1-ին կուրսի 1-ին կիսամյակում
- Ասպիրանտուրա. 2-րդ կուրսի 1-ին և 2-րդ կիսամյակներում (առկա)

[4]Եթե դրանք ֆինանսավորվում են որևէ դրամաշնորհային կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից:

- Ասպիրանտուրա. 2-րդ և 3-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակներում (հեռակա)
- Հայցորդություն. 2-րդ, 3-րդ կուրսերի 1-ին և 2-րդ կիսամյակներումն 4-րդ կուրսի 1-ին կիսամյակում
- Հիմնական և ներքին համատեղությամբ աշխատող աշխատակիցները:

(3.1 կետը փոփոխվել է 04.01.2024թ., Հրաման՝ 12 Ն/Մ)

3.2. Շարժունությանը դիմող շահառուների ընտրությունն իրականացվում է երկու եղանակով.

3.2.1. Ընտրությունն իրականցվում է հյուրընկալող բուհի կողմից առաջարկված տարբերակով կամ էլեկտրոնային հարթակում դիմորդի դիմում-հայտը լրացնելուց հետո: ՎՊՀ-ի կողմից իրականացվում է միայն դիմորդի՝ դիմելու իրավասություն ունենալու հաստատումը և, հյուրընկալող բուհի կողմից լրացուցիչ պայմանի դեպքում, նախնական ընտրությունը:

3.2.2. Եթե հյուրընկալող բուհն ընտրության իրավունքը թողնում է ՎՊՀ-ին, ապա ընտրությունն իրականցնում է ՎՊՀ-ում ընտրող հանձնաժողովը՝ հետևյալ կազմով.

- ռեկտոր,
- ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր,
- գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր,
- յուրաքանչյուր ֆակուլտետից պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչ դեկանի ներկայացմամբ,
- ուսխորհրդի կողմից առաջադրված մեկ ուսանող (Բակալավրիատ՝ IV կուրս կամ մագիստրատուրա, ՄՈԳ՝ 85-ից բարձր)

Ընտրող հանձնաժողովը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, տվյալ ուսումնական տարվա շարժունության բոլոր մրցույթների կազմակերպման համար: Հանձնաժողովի անդամի դիմումատու լինելու դեպքում, նա չի մասնակցում գնահատմանը:

(3.2.2. կետը փոփոխվել է 11.06.2025թ., Հրաման՝ 532 Ն/Մ)

3.2.2.1. Հանձնաժողովին ներկայացվում են արտագնա շահառուների հետևյալ փաստաթղթերը.

ա) **Ուսանողներ.**

- **առաջադիմությունը հաստատող փաստաթուղթ** (ակադեմիական տեղեկագիր), մինչև 100 միավոր (ՄՈԳ-ի անցողիկ շեմը՝ 85), **համարվում է մրցութային ցուցանիշ**,
- ***օտար լեզվի իմացությունը հաստատող բուհի կողմից հավաստող փաստաթուղթ*** *- ըստ հյուրընկալող բուհի պահանջի B1 կամ B2 օտար լեզվի իմացության մակարդակ (մինչև 100 միավոր, անցողիկ շեմը՝ B1 – 80, B2-70 միավոր՝ համապատասխան թեստի համար), TOEFL կամ IELTS միջազգային վկայականներ՝ համապատասխանաբար B1 կամ B2 մակարդակ,*

  միջազգային հավատարմագրված կազմակերպությունների կողմից օտար լեզվի իմացությունը հավաստող՝ պետության լիազոր մարմնի կողմից հաստատված և վավերացված փաստաթուղթ՝ չի համարվում մրցութային ցուցանիշ,
- **մոտիվացիոն նամակ** գնահատում է ընտրող հանձնաժողովը, **համարվում է մրցութային ցուցանիշ**
- ինքնակենսագրական տվյալներ (CV), **չի համարվում մրցութային ցուցանիշ**:

բ) **Վարչական աշխատակիցներ և դասախոսներ (վերապատրաստում).**

- *TOEFL կամ IELTS միջազգային վկայականներ՝ համապատասխանաբար B1 կամ B2 մակարդակ՝ ըստ հյուրընկալող բուհի ներկայացրած պահանջի,*

  միջազգային հավատարմագրված կազմակերպությունների կողմից օտար լեզվի իմացությունը հավաստող՝ պետության լիազոր մարմնի կողմից հաստատված և վավերացված փաստաթուղթ՝ չի համարվում մրցութային ցուցանիշ,
- **մոտիվացիոն նամակ** (մինչև 100 միավոր), գնահատում է ընտրող հանձնաժողովը, **համարվում է մրցութային ցուցանիշ,**
- **ինքնակենսագրական տվյալներ (CV), չի համարվում մրցութային ցուցանիշ**:

գ) **Դասավանդող աշխատակիցներ.**

- *TOEFL կամ IELTS միջազգային վկայականներ՝ համապատասխանաբար B1 կամ B2 մակարդակ՝ ըստ հյուրընկալող բուհի ներկայացրած պահանջի,*

  միջազգային հավատարմագրված կազմակերպությունների կողմից օտար լեզվի իմացությունը հավաստող՝ պետության լիազոր մարմնի կողմից հաստատված և վավերացված փաստաթուղթ՝ չի համարվում մրցութային ցուցանիշ,

- **մոտիվացիոն նամակ** (մինչև 100 միավոր) գնահատում է ընտրող հանձնաժողովը, **համարվում է մրցութային ցուցանիշ**
- **դասավանդման պլան** (երաշխավորված ամբիոնի նիստում)
- **ինքնակենսագրական տվյալներ** (CV) **չի համարվում մրցութային ցուցանիշ:**

(3.2.2.1 կետը փոփոխվել է 04.01.2024թ., Հրաման՝12 Ն/Մ, 11.06.2025թ., Հրաման՝532 Ն/Մ)

3.2.2.2 Հանձնաժողովի անդամը անհրաժեշտության դեպքում ընտրության գործընթացին կարող է մասնակցել առցանց՝ Zoom և Google Meet հարթակներում, բաց տեսախցիկով:

(3.2.2.2 կետն ավելացվել է 04.01.2024թ., Հրաման՝ 12 Ն/Մ)

3.2.3. Համապատասխան լեզվի բազային բարձրագույն կրթություն ունեցող վերապատրաստման և դասավանդման համար հայտ ներկայացրած դիմորդները (բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր; բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ովքեր վերջին 3 տարում մասնագիտական դասընթացներ են վարում համապատասխան կրթական ծրագրում) ազատվում են **օտար լեզվի իմացությունը հաստատող փաստաթուղթ ներկայացնելուց**:

(3.2.3. կետը փոփոխվել է 11.06.2025թ., Հրաման՝532 Ն/Մ)

3.2.4. Հանձնաժողովը բոլոր դիմորդների համար կազմակերպում է հարցազրույց, որը գնահատվում է 100 բալանոց համակարգով: Հարցազրույցը անցկացվում է հայերեն:

(3.2.4 կետը փոփոխվել է 04.01.2024թ., Հրաման՝12 Ն/Մ, 11.06.2025թ., Հրաման՝532Ն/Մ)

3.2.5. Հանձնաժողովը գնահատում է հետևյալ մրցութային ցուցանիշները.

Հանձնաժողովը գնահատում է հետևյալ մրցութային ցուցանիշները.

Մոտիվացիոն նամակ, որի շարադրման և գնահատման չափորոշիչները ներկայացված են Հավելված 3-ում:

Հարցազրույց, որի գնահատման չափորոշիչներն են

դիմորդներին տրվում է 5 հարց (յուրաքանչյուրը 20 միավոր):

Մրցույթին մասնակցելու անցողիկ շեմը՝ գումարային 140 միավորն է հնարավոր 200 միավորից:

(3.2.5. կետը փոփոխվել է 11.06.2025թ., Հրաման՝ 532 Ն/Մ)

3.2.6. Յուրաքանչյուր ընտրության դեպքում, ելնելով մրցույթի առանձնահատկությունից կամ հրավիրող բուհի կողմից առաջադրվող պահանջներից, հանձնաժողովը կարող է ընտրության հատուկ պայման(ներ) սահմանել, որոնք հայտարարվում են նախապես:

3.2.7. Լեզվի իմացությունը ստուգելու համար համալսարանում տարին երկու անգամ կազմակերպվում է օտար լեզվի քննություն՝ համապատասխան համալսարանի ռեկտորի կողմից հաստատված ընթացակարգի:

Քննությունից առաջ դիմումատուին տրամադրվում է յուրաքանչյուր լեզվական մակարդակի թեստի նմուշօրինակ:

(3.2.7 կետը փոփոխվել է 04.01.2024թ., Հրաման՝ 12 Ն/Մ, 11.06.2025թ., Հրաման՝ 532 Ն/Մ)

3.2.7.1.(3.2.7.1. կետը ուժը կորցրած է ճանաչվել 04.01.2024թ., Հրաման՝ 12 Ն/Մ)

3.2.8. Հայտարարված մրցույթին դիմած հայտատուների փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո, 5-օրվա ընթացքում հանձնաժողովը ստուգում է կարգի 3.2.2.1. պարբերության ա), բ), գ) կետերում պահանջվող փաստաթղթերի համապատասխանելիությունը:

Անհամապատասխանելիության դեպքում դիմորդը գրավոր տեղեկացվում է մինչև լեզվի քննությունն ու հարցազրույցը:

(3.2.8 կետը փոփոխվել է 04.01.2024թ., Հրաման՝ 12 Ն/Մ)

3.2.9. *(3.2.9 կետը ուժը կորցրած է ճանաչվել 04.01.2024թ., Հրաման՝ 12 Ն/Մ)*

3.2.10. Հավասար միավորներ ունենալու դեպքում նախապատվությունը տրվում է.

- նախկինում շարժունությանը չմասնակցած դիմորդներին[5]
- խոցելի խմբին պատկանող (հաշմանդամություն, սոցիալապես անապահովն այլն) դիմորդներին[6],

3.2.11. Ընտրող հանձնաժողովը պարտավոր է գրավոր տեղեկացնել բոլոր դիմորդներին ընտրության արդյունքների մասին:

[5]Տե՛ս Էրազմուս+ շարժունության գործողությունների ուղեցույցի էջ 8:
[6]Տե՛ս Էրազմուս+ ծրագրի ուղեցույցի էջ 13:

4.ԸՆՏՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1. Ուսանողներ.

4.1.1. Շարժունությունն իրականացնելուց առնվազն մեկ շաբաթ առաջ ուսանողը ՎՊՀ ռեկտորին ներկայացնում է դիմում[7]:

4.1.2. Դիմումին կից ներկայացվում է ՎՊՀ ռեկտորի, ուսանողի և հյուրընկալող բուհի ներկայացուցչի միջև ստորագրված և կնքված եռակողմ ուսումնառության համաձայնագիր, որում նշվում են այն դասընթացները, որոնք ուսանողը պարտավորվում է ուսումնասիրել հյուրընկալող բուհում: Համաձայնագրի նախապատրաստման գործընթացն իրականացվում է միջազգային կապերի և դրամաշնորհների խթանման մասնագետի (Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի) և համապատասխան ֆակուլտետի դեկանի կողմից:

4.1.2.1.Եռակողմ համաձայնագիրը կազմելիս գործընկեր բուհում և ՎՊՀ դասավանդվող առարկաների միջև առաջացած տարբերությունները ֆակուլտետի դեկանը պետք է համաձայնեցնի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ[8]:

4.1.2.2. Ուսումնառության համաձայնագրում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում ուսանողը հյուրընկալող բուհից պետք է չորսից յոթ շաբաթվա ընթացքում[9] էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով տեղեկացնի ՎՊՀ-ին և դիմի հաստատելու պայմանագրում կատարված փոփոխությունները: Առաջարկված փոփոխությունները չընդունելու դեպքում կգործի շարժունությունից առաջ կնքված և հաստատված համաձայնագիրը:.

4.1.3. ՎՊՀ ռեկտորի կողմից տրվում է հրաման, համաձայն որի ուսանողը համարվում է շարժունությանը մասնակցող և այլ բուհում ուսումնառությունը շարունակող:

---

[7]Տե՛ս Հավելված 1(դիմումի բովանդակությունը):

[8]Տե՛ս Հավելված 2:

[9]Տե՛ս Էրազմուս+ շարժունության գործողությունների ուղեցույցի էջ 5:

4.1.4. Եթե շարժունությանը մասնակցող ուսանողը հյուրընկալող համալսարանում ուսումնառությունից առաջ ընդգրկված է եղել վճարովի համակարգում, ապա նա պարտավոր է վճարել ուսման վարձը նաև շարժունության ընթացքում:

4.1.5. Անվճար համակարգում գտնվող ուսանողը շարժունության ընթացքում պահպանում է իր կարգավիճակը:

4.1.6. Շարժունությանը կարող են մասնակցել միայն այն ուսանողները, որոնք շարժունությունից առաջ չունեն ակադեմիական պարտք/եր:

4.1.7. Շարժունությունից վերադարձող ուսանողների ակադեմիական պարտքը չպետք է գերազարցի 12 կրեդիտը[10]: 12 կրեդիտից ավել պարտք ունեցող ուսանողը հեռացվում է համալսարանից համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի (կետ 1.11):

4.2. Արտագնա վարչական և դասավանդող աշխատակիցներ.

4.2.1. Շարժունությունն իրականացնելուց մեկ շաբաթ առաջ աշխատակիցը բուհի ռեկտորին ներկայացնում է դիմում:

4.2.2. Դիմումին կից ներկայացվում է աշխատակցի, ռեկտորի, շարժունության պատասխանատու անձի և հյուրընկալող բուհի ներկայացուցչի միջև ստորագրված և կնքված եռակողմ շարժունության համաձայնագիր, որում նշվում են շարժունության նպատակը և աշխատակցի կարճաժամկետ գործունեության ծրագիրը:

5. ՇԱՐԺՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ.

5.1. Արտագնա ուսանողներ.

5.1.1. Հյուրընկալող բուհում համաձայն կնքված եռակողմ պայմանագրի ուսումնասիրած դասընթացներից դրական գնահատականներ ստանալու և կրեդիտներ ձեռք բերելու դեպքում ՎՊՀ-ն պարտավոր է հաշվառել ուսումնառության արդյունքները՝ գրանցելով դրանք ուսանողին վերաբերող տվյալների հենքում:

[10]Տե՛ս ԿԳ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգ, կետ 1.11:

Գործընկեր բուհում ձեռք բերված կրեդիտները, ուսումնառության ժամկետները և հաստատության անունը հաշվառվում է ուսանողի դիպլոմի հավելվածում[11]:

5.1.2. ՎՊՀ պարտավոր է ազատել ուսանողին ուսումնական համաձայնագրում ամրագրված դասընթացների, այլ ուսումնական բաղադրիչների, ուսումնական պլանով նախատեսված քննությունների, ստուգարքների, ստուգման այլ ձևերի վերահանձնումից՝ հաշվառելով եռակողմ համաձայնագրում նշված կրեդիտները:

5.1.3. Ուսանողը պարտավոր է ներկայանալ ՎՊՀ շարժունության համաձայնագրերում նշված ուսուցման ժամկետը լրանալուց 5 աշխատանքային օրից ոչ ուշ՝ ներկայացնելով դիմում ռեկտորին՝ իր ուսումնառության շարունակությունը վերականգնելու խնդրանքով:

5.1.4. Ակադեմիական տեղեկագրի առկայության դեպքում դիմումի հետ ուսանողը կցում է հյուրընկալող բուհում ուսումնառած դասընթացների և ձեռք բերած կրեդիտների մասին տեղեկություններ պարունակող ստորագրված և կնքված ակադեմիական տեղեկագիրը: Եթե հյուրընկալող բուհի կողմից ակադեմիական տեղեկագիրը չի տրամադրվում ուսանողի վերադարձից անմիջապես հետո, ուսանողը տալիս է գրավոր հայտարարություն, որ 12 կրեդիտից ավել պարտք չունի: Հյուրընկալող բուհը պարտավոր է ակադեմիական տեղեկագիրը տրամադրել միջբուհական համաձայնագրում նշված ժամկետներից ոչ ուշ:

5.1.5. Ուսանողը պարտավոր է մարել տվյալ կիսամյակի ուսումնական պլանով նախատեսված և ձեռքբերված կրեդիտների (շարժունության համաձայնագրում ամրագրված) միջև առաջացած տարբերությունները՝ ելնելով 1 կիսամյակը հավասար է 30 ECTS կրեդիտ համամասնությունից:

5.1.6. Մինչև շարժունությանը մասնակցելը համապատասխան ֆակուլտետի դեկանը պետք է որոշի երկու բուհերի միջև առաջացած առարկայական տարբերությունները: ՎՊՀ-ն թույլատրում է ուսանողին՝ մարելու առաջացած ուսումնական տարբերությունները նրա ուսումնառությունը շարունակելու վերաբերյալ հրամանը ստորագրելուց հետո երկամյա ժամկետում: Տարբերությունները հանձնելու գործընթացը դյուրին դարձնելու համար

[11]Տե՛ս Էրազմուս+ շարժունության գործողությունների ուղեցույցի էջ 6:

հյուրընկալող բուհում ուսումնառելու ընթացքում ՎՊՀ-ից ուսանողին կարող են տրվել առաջադրանքներ:

5.1.7. Հյուրընկալող բուհում ուսումնառած դասընթացներից բացասական գնահատական ստանալը և համապատասխան կրեդիտներ չհավաքելը համարվում է ակադեմիական պարտք, որի դեպքում ուսանողը պարտավոր է մարել այն՝ համաձայն բուհում գործող համապատասխան կարգի[12]:

5.1.8. Այն դեպքում, եթե ուսանողի մեկնելուց հետո հյուրընկալող բուհում կատարվել են ուսումնառության համաձայնագրում նշված առարկաների փոփոխություններ, այդ փոփոխությունները չեն համապատասխանում կրթական ծրագրի վերջնարդյունքներին և չեն կարող ընդունվել մայր բուհի կողմից, ուսանողը պարտավորվում է լրացնել պակաս կրեդիտները մայր բուհում, սակայն դա չի համարվում ակադեմիական պարտք: Հյուրընկալող բուհից բերված լրացուցիչ կրեդիտները նշվում են դիպլոմի հավելվածում՝ որպես ուսանողի կողմից ձեռքբերված լրացուցիչ կրեդիտներ:

5.1.9 Շարժունությունից օգտված ուսանողներն իրավունք ունեն կրկին դիմելու շարժունության հյուրընկալող բուհից վերադառնալուց հետո ՎՊՀ-ում առնվազն մեկ կիսամյակ ուսումնառելուց և համապատասխան ֆակուլտետի կողմից նախորդ շարժունության վերաբերյալ դրական կարծիք ստանալուց հետո:

5.2. ԱՐՏԱԳՆԱ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

5.2.1. Շարժունությունը իրականացնելուց հետո աշխատակիցը պարտավոր է ներկայացնել հակիրճ հաշվետվություն հյուրընկալող բուհում իրականացրած գործունեության մասին գիտական խորհրդի և ռեկտորատի նիստերին: Դասավանդող/վերապատրաստվող աշխատակիցը պետք է ներկայացնի շարժունությունը հավաստող վկայական տրված հյուրընկալող բուհի կողմից:

(5.2.1. կետը փոփոխվել է 11.06.2025թ., Հրաման՝ 532 Ն/Ս)

5.2.2. Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի քննարկում-հանդիպումների ժամանակ

[12]Այս կարգը գործում է այն դեպքում միայն, եթե հյուրընկալող բուհը չունի պարտքերի մարման հետ կապված այլ ընթացակարգ:

աշխատակիցը կհրավիրվի նաև ներկայացնելու հյուրընկալող բուհում ձեռք բերած դրական փորձն՝ ըստ համապատասխան ոլորտի:

5.3. Ներգնա[13] ուսանողներ/աշխատակիցներ.

5.3.1. Ներգնա ուսանողների/աշխատակիցների ընտրությունը կատարվում է գործընկեր համալսարանի կողմից ներկայացված թեկնածուի առաջադրման նամակի համաձայն:

5.3.2. Գործընկեր համալսարանի դիմորդները պետք է ՎՊՀ-ին ներկայացնեն.

- ուսանողի/աշխատակցի ինքնությունը հավաստող փաստաթուղթ,
- տեղեկանք ուսանողի ուսումնառության /աշխատակցի զբաղվածության մասին,
- ուսումնառության/դասավանդման կամ վերապատրաստման համար այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

5.3.3. Ուսանողի, գործընկեր և հյուրընկալող համալսարանների միջև կնքվում է ուսումնառության համաձայնագիր:

5.3.4. ՎՊՀ-ի հյուրընկալող ֆակուլտետը ներգնա ուսանողի ուսումնառության ավարտից հետո գործընկեր համալսարանին և ուսումնառող ուսանողին տրամադրում է ուսանողի առաջադիմության տեղեկագիրը, որում նշվում են շարժունության ժամանակահատվածը, ուսումնասիրված առարկաները, ձեռք բերված կրեդիտների քանակը, գնահատականները և գնահատման սանդղակի բացատրությունը:

5.3.5. ՎՊՀ-ի կողմից տրվում է շարժունությունը հավաստող վկայական, որտեղ նշված կլինեն ուսանողի, աշխատակցի շարժունության ժամանակահատվածը, մասնագիտությունը/բաժինը/ստորաբաժանումը:

5.3.6. ՎՊՀ-ում հյուրընկալվող աշխատակիցների շարժունությունն արդյունավետ իրականացնելու համար պատասխանատվությունն իր վրա է վերցնում տվյալ ոլորտի համար պատասխանատու ամբիոնը/ֆակուլտետը/ստորաբաժանումը՝

[13] Գործընկեր բուհից ՎՊՀ-ում հյուրընկալվող ուսանողներ/ աշխատակիցներ:

նշանակելով պատասխանատու անձ՝ ելնելով հյուրընկալողի գործունեության ոլորտից:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Գիտխորհրդի կողմից 27.01.2022թ. ընդունված Ուսանողների, վարչական եվ պրոֆեսորադասախոսական աշխատակազմի շարժունության կանոնակարգը:

6.2. Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Ռեկտորի հրամանով հաստատվելուց հետո:

Հավելված 1

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր դոկտոր, պրոֆեսոր Ռուստամ Սահակյանին
_____ֆակուլտետի _____ մասնագիտության
առկա/հեռակա ——— կուրսի ուսանող(ուհի)_____-ից
Դիմում

Տեղեկացնում եմ Ձեզ, որ մրցույթով ընտրվել եմ _____ ուստարում Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում __.__.202_ թ-ից __.__.202_ թ-ը ուսումնառելու _____համալսարանում (երկիր):

Խնդրում եմ Ձեզ թույլատրել շարունակելու ուսումնառությունս վերոնշյալ համալսարանում:

Կից ներկայացնում եմ ուսումնառության համաձայնագիրը և հրավեր-նամակը:

Դիմող՝ ստորագրություն/ա.հ.ա.

__.__.202_ թ.

Հավելված 2

ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

Ընդունող բուհ		ՎՊՀ	
առարկա	ECTS կրեդիտ	Համապատասխան առարկան	ECTS կրեդիտ
Չհամապատասխանության դեպքում			
առարկա	ECTS կրեդիտ	Փոխարինող առարկա	ECTS կրեդիտ

Հյուրընկալող համալսարանի դասընթացի և ՎՊՀ-ում փոխարինող դասընթացի կրեդիտների անհամապատասխանության դեպքում ամբիոնը կարող է առաջարկել հավելյալ դասընթաց՝ պակաս ECTS կրեդիտները համալրելու նպատակով:

Ուսանող՝ _____

Ռեկտոր՝ Ռ. Սահակյան

Հավելված 3

ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՆԱՄԱԿԻ ՇԱՐԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1. ***Ակադեմիական և մասնագիտական փորձառություն*** *(գնահատվում է 20 միավոր)*

   Կարճ նկարագրություն դիմորդի ներկայիս ակադեմիական կարգավիճակի կամ մասնագիտական դերի, հիմնական ձեռք բերումների և համապատասխան փորձառության մասին՝ շեշտադրելով թե ինչպես են դրանք համահունչ հյուրընկալող համալսարանի ակադեմիական ուղղություններին կամ մասնագիտացումներին:

2. ***Շարժունության ծրագրին մասնակցելու շարժառիթները*** *(գնահատվում է 20 միավոր)*

   Պարզաբանում, թե ինչու է դիմորդը ցանկանում մասնակցել ծրագրին՝ ինչու այս համալսարանը և ինչպես է շարժունության փորձը ներդաշնակվում նրա կրթական կամ մասնագիտական ճանապարհին:

3. ***Շարժունության փորձի նպատակները*** *(գնահատվում է 20 միավոր)*

   Հստակ ձևակերպում, թե ինչ է դիմորդը ակնկալում սովորել, ուսումնասիրել կամ ինչ ներդրում է

   կատարել կարճաժամկետ մնալու ընթացքում՝ ներառյալ ակադեմիական, հետազոտական կամ հմտությունների զարգացման առումներով:

4. ***Մասնակցի կողմից հյուրընկալվող համալսարանում ունեցած ներդրումը*** *(գնահատվում է 20 միավոր)*

   Ինչ կարող է առաջարկել դիմորդը հյուրընկալող համալսարանին:

5. ***Շարժունությունից վերադարձած մասնակցի գիտելիքի և փորձի փոխանցումը*** *(գնահատվում է 20 միավոր)*

   Ինչպես է դիմորդը նախատեսում կիրառել ստացած փորձը վերադարձից հետո:

(Հավելված 3-ը լրացվել է 11.06.2025թ., Հրաման՝ 532 Ն/Մ)